Հավելված
ՀՀ կառավարության 2020 թվականի
մարտի 5-ի N 252 - Ա որոշման

ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան

_____2020 թ.

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն)՝ ի դեմս _____ _____-ի, մի կողմից և «Դարդան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն)՝ ի դեմս _____-ի, մյուս կողմից (այսուհետ՝ միասին Կողմեր), նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության սնանկության դատարանի վարույթում է գտնվում թիվ ՍՆԴ/1755/04/19 սնանկության գործն ըստ Նախարարության դիմումի ընդդեմ Ընկերության՝ սնանկ ճանաչելու պահանջի մասին, և ղեկավարվելով «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի պահանջներով, կնքեցին սույն հաշտության համաձայնությունը (այսուհետ՝ Համաձայնություն) հետևյալի մասին.

1. Կողմերը հաստատում են, որ Նախարարության և Ընկերության միջև 2010 թվականի ապրիլի 7-ին կնքված N 01 պահանջի իրավունքի զիջման մասին պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) հիման վրա Ընկերության վարկի ժամկետանց հիմնական գումարի նկատմամբ հաշվարկված տոկոսագումարները և տույժի գումարները կապիտալացնելուց հետո վարկի հիմնական գումարի մնացորդը կազմում է 1,059,547.73 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:

2. Կողմերը գալիս են համաձայնության առ այն, որ Համաձայնության 1-ին կետում նշված գումարը և վարկի մնացորդի նկատմամբ Պայմանագրով սահմանված տոկոսագումարը Ընկերությունը պարտավորվում է վճարել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե սկսած 2020 թվականի հուլիսի 1-ից մինչև 2026 թվականի հունիսի 30-ը ներառյալ՝ ամսական 14,715.94 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ մայր գումարի և մնացորդի նկատմամբ Պայմանագրով սահմանված տոկոսագումարի մարումներ կատարելու միջոցով մինչև յուրաքանչյուր ամսվա 20-ը ներառյալ:

3. Ընկերությունն իրավունք ունի վաղաժամկետ մարել Համաձայնության 1-ին կետում նշված վարկի գումարը, ինչպես նաև վճարման օրվա դրությամբ հաշվարկված տոկոսագումարը:

4. Ընկերությունը պարտավորվում է մինչև 2020 թվականի հուլիսի 1-ը ներառյալ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի համապատասխան հաշվեհամարին վճարել թիվ ՄՆԴ/1755/04/19 սնանկության գործով Նախարարության կողմից 500,000 դրամ նախապես վճարված պետական տուրքի գումարը:

5. Պայմանագրով ստանձնած պարտավորության կատարումն ապահովելու նպատակով գրավադրված գույքի նկատմամբ Նախարարության գրավի իրավունքը պահպանվում է մինչև Ընկերության կողմից Համաձայնությունով ամրագրված պարտավորությունների լրիվ կատարումը:

6. Ընկերության կողմից Համաձայնության պայմանների յուրաքանչյուր խախտում հիմք է հանդիսանում Համաձայնությունը հաստատող դատական ակտի հիման վրա Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կատարողական թերթ ստանալու և հարկադիր կատարման ներկայացնելու համար:

7. Կողմերը հավաստում են, որ տեղյակ են Համաձայնությունից բխող իրավական հետևանքների մասին:

8. Համաձայնությունը կազմված է հավասար իրավաբանական ուժ ունեցող երեք օրինակից՝ Կողմերից յուրաքանչյուրին մեկական օրինակ և մեկ օրինակ դատարանի հաստատմանը ներկայացնելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ